

Ջ Ա Ի Ա Խ Ք *

Ն. ԼԱԼԱՅԵԱՆԻ.

ՔԱՆԱԻՈՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Վ Ի Ճ Ո Վ Ի Ե Ր Գ Ե Ր

I.

Ալ ծիռն նալն ի՞նչ էնէ,
Ըռունտը խալն ի՞նչ էնէ,
Սիրունը սրտովս ըլլիւ,
Աշխրթի մալն ինչ էնէ:

Ա՛խ էնեմ արուն գուգայ,
Սնւ սրտիս զարուն գուգայ,
Ի՞նչ էնեմ անպէս եարը
Պըտըտուի տարուն գուգայ:

Ախով սիրտս վառեցաւ,
Ալ արունս սառեցաւ,
Անխիղճ մի ըլլի, իմ եարը,
Սաղ աչքերս պաղեցաւ:

Ախպեր հանաքիդ մեռնիմ,
Օսկէ դանակիդ մեռնիմ՝
Ծամփայ էրթող շէկ աղբարը,
Դիւքան թազարիդ մեռնիմ:

Ախշի մազերդ երկանի
Քամին թէլ թէլ կը տանի.
Միք մեխթըտ սիրելիք
Սէրը՝ եաման կը տանի.

Ախշի մազերդ հիսէիք,
Թուշդ էրէսիս քսէիք,
Էլլէիս վարդի ծառին,
Բիւլքիլի պէս խօսէիք:

Աղշի դու մօրէդ ուշ էլար,
Մեծըցար կարսիք թուշ էղար,
Տունմ՝ չունիմ օր տուն էրթանք
Քեզի առնեմ ո՛ր էրթանք:

Արծթի քանծր տեղ է,
Ջուրը հիւրնդի դեղ է.
Ուզած ուզածի շնն տար,
Աս ի՞նչ անօրէն գեղ է:

*) Տես սԱզգադրական Հանդէս Ա. դիրք 116—380 երես և
Բ. դիրք 245—294 երես.

Այ ծի հեծնիմ կը քեզի,
Ծորոյայ քշեմ կը քեզի,
Գընը եարէս խապար քեր,
Հարպաղ չուլ կէնեմ քեզի:

Արեւը կամար կամար,
Կապել ես օսկի քամար,
Յիթոսն օր պաս էմ պահէ
Ծարիս ծամիի համար:

Արեմ առաւ գերանին,
Մեռնիմ Աետարանին,
Մէ շուխտ էղընէր թռաւ
Կանանչ խոտը քերանին:

Ախպէր թաղող անուշ է,
Բաղիդ միջին եմիշ է,
Ախպէր խաթրող շմայ
Եարս քիզնէն անուշ է:

Ալ արախչին դրեր ես,
Ինչի՞ միտդ ծոնր ես,
Բարեւ կուտամ շես առնի՞
Մէակամ ինձէն շորեր ես:

Արեւը սարին վրայ,
Մամուռը քարին վրայ,
Օխթը զիկում խտարէապար,
Իմ սիրած եարին վրայ:

Առչիկն էկեր պար կուգէ,
Մարգրիտներ շար կուգէ,
Հըլը պազմ շտուած՝
Ինձէն անգին քար կուգէ:

Ասոր նորը նորեր է,
Իմ եարի եզ կորեր է,
Վրով որ գտնի թող ետ տայ,
Ծակտիս օսկին միւժղան է:

Առչի բոյրը դիւրմալի,
Աշխնբըտ սիրմալի,
Միք միխթրէ մարիկներ,
Սաւղան (սէր) կրակ զլմանի:

Առչի կըսեմ քեզ եաս ա,
Շապիկը շիթու խաս ա,
Զընը քու մօրը ըսա,
Ինձ ըռնէ՛ իրն փեսայ:

Բարակ ծամիայ մտերևս
Կորուցածդ գտեր ես,
Ինձի մտքէդ ցկեր ես,
Ծոր առածդ չվայլես:

Առչի ինչ էր պիլակը
Ռխով կոչկով պիլէակը,
Մի բանայ մերմակ գէօկտը
Ինձի կէփէ կրակը:

Բանցր պատին կայներ ես,
Բանցր լէյաղ ըռներ ես,
Բարեւ կուտամ շես առնէ,
Մէակար ինձէն շորեր ես:

Գնացի շուրը ջրի,
Օտքս ընկաւ օձի լեղի,
Ի՞նչ ըսեմ հօքս ու մօքս,
Ինձ տուէն դարիւպ տղի:

Դեղէն էլլես զեղ մանիս,
 Իմ քրցած տեղը մտնիս՝
 Ինծէն դայրի եար ըննէս՝
 Բէմուլատ հողը մտնիս:

Դուժանը վարի փոսին,
 Եողն է զարկէ ազօսին,
 Կարմիր խնձոր դօշ էնեմ՝
 Ղրկւմ իմ նանի փէսին:

Դուժանը վարած տեսայ,
 Հերկերը վարած տեսայ
 Ապուռքտ գետինը մտնի,
 Սիրածդ տարած տեսայ:

Դէօշակ ցկի փոթ էկաւ,
 Բարցիդ միջէն Ֆոտ էկաւ,
 Մեռնիմ դէաստա քէանքուլիդ
 Բու խապարդ եփ էկաւ:

Դու նստեր ես դէօշակին,
 Ուշկդ ու միտքդ փէշակին՝
 Խմեր էս նոան զինին՝
 Հոտ քաշես մանուշակին:

Դու նտեր էս զերանին,
 Ապրեշում է քերանին.
 Օսկէ դայթան տու զործեմ՝
 Կարեմ՝ ճեպիտ քերանին:

Դէմէն ձիաւոր զնաց,
 Ծալը պըլպըլաց զնաց,
 Ամենքին քարե տունց՝
 Ինծի վառեց ու զնաց:

Դէօշակ ցկի փոթ կուգար,
 Բարձիդ սկէն Ֆօթ կուգար,
 Մեռնիմ դաստայ քէանքուլիդ՝
 Միջէն խնկայ Ֆօթ կուգար:

Դամքուրիս կոթը քերեմ,
 Կայնի քեզ զինի քերեմ,
 Չեոքս ճտովդ տանեմ,
 Գնացած խնկը քերեմ:

Դուն կայներ էս կարմնմին,
 Փաթըթունը էս եպիոնմին,
 Բեզ կըսէն զեղի փեսայ
 Ժոցդ կայ դեղին քիսայ:

Ես Կարծաղու փոսէն եմ,
 Գոգտաշ սարի փսէն եմ
 Մուժայ տարէք քո մօրը՝
 Ես քու նանու փէսէն եմ:

Ես աս զեղին ցորնէն եմ,
 Խաս քաղու խնձորէն եմ,
 Խնձոր էդէ հասեր եմ,
 Բիւլըիլի պէս խօսեր եմ:

Ես էս զեղի ձորէն եմ,
 Խաս պաղչի խնձորէն եմ,
 Կարմիր խնձոր ճեպըտ եմ,
 Ուր օր կերթաս հետդ եմ:

Երկընուց մատնիմ՝ իջաւ,
 Մատիս վրայ խաշուեցաւ,
 Ես իմ եարը քիամ՝ զիտէի,
 Ծէվահիր քար քացուեցաւ:

Էս գիշեր լուսը տեսայ,
 Իմ եարըս դուսը տեսայ.
 Էլէր էր մէրին կերթար՝
 Կացինն ումուզը տեսայ:

Էս բակը բակ զըմանիր,
 Գլխունը թագ զըմանիր,
 Իմ եարը դունէն անցաւ՝
 Իրմովը բէակ զըմանիր:

Էլեր ես փատ կը տաշես,
 Ալամ աշխարքին կաշես,
 Ինձի սէր էրիւր շառար,
 Ալ ախալուողը շմաշես:

Թաւէն ըրէք ծուկ խաշենք,
 Էլլէնք կաուրը աշէնք,
 Տեսնենք եարս եփ կուզայ՝
 Զոքենք ճովէքը քաշենք:

Ժամայ դունէն դուս կուզաս,
 Ժրագի պէս լուս կուտաս,
 Ես իմ մէյլը տունը եմ,
 Դու քու մէյլը ե՛փ կուտաս:

Իմ եարը դուս քներ էր,
 Փափաղը ծուկ դըրեր էր,
 Հաղլին եարը տունն տառցաւ,
 Իմ եարը ծորէն անցաւ:

Ինի մանչուն Ֆասը ալ է,
 Դառնայ դառնայ ինձի կաշէ,
 Ինձէն քեզի Ֆայդայ չկայ,
 Գնա՛, գնա՛ մամփատ աշէ:

Իմ եարս դուսն է դրած՝
 Ալ գոտին նուսն է դրած.
 Իմ եարիս պոյին մեռնիմ՝
 Ալ Ֆասը ծուրըն է դրած:

Իմ եարըս էլաւ գնաց,
 Սարին դէմ առաւ մնաց,
 Սրտով թողուլէն շառայ,
 Սրտիս պէտքը էղաւ մնաց:

Լուսնեակ էրգան գիշեր,
 Գեր օնքլի կարմիր թշեր,
 Աղշի ախպորդ արեւը սիրես՝
 Դաստուր տուր գամաս գիշեր:

Լուսնիակ կամար կամար,
 Ես մեռնիմ քեզի համար,
 Սիրակամս ինձի շնն տար,
 Աստուծոյ խաթերն համար:

Լուսնեակը ըտլըրեր է,
 Ամպի մէջ կլորեր է,
 Աղշի քու ծոցիդ մէջը՝
 Ժըծերդ կլորեր է:

Լուսնիակ կամաց գնա,
 Կանգ տու ու ցածանց գնա,
 Հեռաւոր եարմ ունիմ,
 Բարեւ տու անցի գնա:

Լուսնեակն էլէ լուսէ լուս՝
 Ախպեր քուրոջ կանչեց դուս,
 Ախպեր պէտք է քուր շարէ՝
 Բուրոջ դարդեր ետ պարէ:

Լաշակը պուկս եմ՝ ցկէ,
 Իմ եարը միտքս եմ՝ ցկէ,
 Իրիք օր է չէմ տեսէ՝
 Կրակը սիրտս եմ՝ լըցէ

Լուսնիակ երկար գիշեր,
 Կէ՛ն ունքվի կարմիր թըշեր,
 Խապար էրէք իմ եարին,
 Չկենայ գայ աս գիշեր:

Ժառին տակը հէլ ունիմ,
 Հում ապրէշում թէլ ունիմ,
 Ժօ մանչ տավարը վար քէ՝
 Ես քու վրատ սէր ունիմ:

Ժառաւեմ՝ հէջ ջուր չկայ,
 Գետերուն կամուրջ չկայ՝
 Վախենամ դարիպ մեռնիմ՝
 Զույս հար ու մար չկայ:

Կայներ ես քաղի միջին,
 Օտվիքըտ շաղին միջին,
 Կանչէ եար, ձէնիդ մեռնիմ՝
 Ես եմ քու խաղիդ միջին:

Կայներ ես կանչել ա շես,
 Պոյէդ ամնչել ա շես,
 Եարդ օր կուգայ կանցնի՝
 Չենէն ա ծանչել ա շես:

Կայներ եմ գալ շեմ կրնայ,
 Լցուեր եմ լալ շեմ կրնայ,
 Ինչըդ օր գնացել ես՝
 Անունըդ տալ շեմ կրնայ:

Կայներ ես կաթ գըլմանիս՝
 Բարունք ես՝ վարդ գըլմանիս՝
 Առ հայլին էրեսըտ աշէ՝
 Ալամին խախք գըլմանիս:

Կուտիկմ ունիմ աղայ է,
 Ալայ չէ՝ ալուալայ է,
 Եար ըռնելը դոլայ է,
 Բաց թողնելը քալայ է:

Կայնայ լեզի խրատի,
 Աղչի գնա կրակի՝
 Կայնի քոյիդ սէյր էնեմ՝
 Ուրըթ շաքաթ կիրակի:

Կայաւը կայներ է քարին,
 Կտուցը լիքը նարին,
 Մէ եայլուխ վարդ էմ քաղէ՝
 Տարէք իմ անուշ եարին:

Կայներ եմ շեմ կրնայ գայ,
 Լցուեր եմ շեմ կրնայ լայ:
 Ետ ծամվուլը մի էրթայ,
 Անունտ էլ չի կրնը տայ:

Կարմիր վարդը դամով է,
 Սիրած եարը համով է,
 Ատ տեղ զօռի քան չկայ՝
 Սէրն ու սէաւտան կամով է:

Հանդիտ հարօսին մեռնիմ՝
 Գինուդ կարասին մեռնիմ՝
 Ծամկայ էրթող չէկ տղայ,
 Սրտիդ հաւասին մեռնիմ:

Հաց եմ թխե գարի է,
 Իմ եարը սաֆալի է,
 Մեռնիմ՝ Սաֆար գնալուդ,
 Խօսքերտ շաքարի է:

Ձեռդ առիր ես էսան,
 Թափ տու թութունիդ քիսան,
 Կանչե՛ կանչելուդ դուրպան
 Իմ նանի ազիս փեսան:

Ղուշը թուա մեր արտէն,
 Կտրաւ իմ սագիս ֆարտէն,
 Աշըղ չեմ աշըղ դառայ՝
 Բնմուրատ եարիս դարդէն:

Ծրագ դնեմ լուսացու,
 Կանանչ ատլաս քիսացու,
 Ես քու նանին փեսացու՛
 Դուն իմ նանին հարսնացու:

Ծտիս հըլունը հաղեղ է,
 Զանըս ջանիդ լայեղ է,
 Էլար դուռը աշեցիր,
 Զիւանի ումըղ մաշեցիր:

Մէանի ըսեմ մէ գերան
 Մէ տունմ՝ ջուխտակ գերան,
 Ռունդը ¹⁾ ոունդին կուտան,
 Զիրգինն աշխրքի գերան:

Մագերդ սև, թուշդ կարմիր,
 Եացար լեզուդ գերանըս դիր,
 Զնուդդ ինծի եսիր էրիր,
 Փարէ ²⁾ զլուխս ծիծիկիդ դիր:

¹⁾ Սիրուշը. ²⁾ Գոնէ.

Մառմառ քարը տաշած է,
 Եարըս դալմով քաշած է,
 Աշքին ոնկին հաւան եմ,
 Զիշըմ՝ որանզը թուած է:

Մուղնուայ ջուրը սառն է՝
 Մուղնի էլթողն իմ եարն է՝
 Թող էրթայ մուրագն առնէ՝
 Ետ դասնայ սիրածն առնէ:

Եսխըրը կայներ է դիզը,
 Կանչե՛կը դարագեօզը,
 Ղրկէ մահրամաղ լուամ՝
 Առնեմ՝ քեանքիլիդ թողը:

Պիլքիլը տալին վրայ,
 Խնծորը ծառին վրայ.
 Սիրած սիրածին տալին՝
 Զոր գետնին քարին վրայ:

Պիլակդ ունիս ջուխտ ոջլ-
 պաղի
 Մառջան խառնած, սօլիսաղի,
 Մեռնիմ՝ ա սէրըս շի պաղի՝
 Եսխուի պէս կպար ինծի:

Զախճիս դուռը տաշած է,
 Մահրամաս զիլ քաշած է,
 Իրէք օր է չեմ տեսէ,
 Սիրտս փորէս քաշած է:

Զաղացս կաղայ ծաւար,
 Դուշմընիս աշքը խաւար,
 Եարէն օր կառնննք խաւար,
 Թող տանին օխթը տաւար:

Ջուրը առնեմ էլնեմ սարը,
 Հտեսնիմ ֆիտան կարը,
 Ինձ տուէք էն ֆիտանին,
 Հըրբաշեմ ահ ու գարը:

Սո՛մ սրմալի ալ փուշի,
 Աղշի սիրտս կը մաշի:
 Բու տուած անուշ պագիկը
 Հեմ տայ հազար դուռուշի:

Սարին տակը մնացի՝
 Բկիս կապը վլացի,
 Խապար էրէք իմ եարիս՝
 Ես հօս դարիպ մնացի:

Սարերը հէշտցեր են՝
 Հըրըը շատըցեր են,
 Խապար էրէք իմ եարիս՝
 Մուշտարիքս շատըցեր են:

Սարերը նունուշ գըլլի,
 Վարդին մէջը փուշ գըլլի.
 Գլուխս եարիս ծընկին՝
 Բունըս շատ անուշ գըլլի:

Սէրն ի՞նչ է սաւտան ի՞նչ է,
 Էս խաղի դայդան ի՞նչ է.
 Բանցր ծառ անուշ պտուտ,
 Հեմ հասնի ֆայտան ի՞նչ է:

Սիա փուշին փռած էր,
 Ղուծնի ըարծը դրած էր,

Բէաթէամ էրէք ¹⁾ աղաներ,
 Եարըս ինձնէն ջօրած էր:

Պատին էտեւը ամպեր էր,
 Թոփով օսկին քնդեր էր,
 Մեռնիմ ազապ ղըլըղիդ՝
 Ղըլըղը կեղտոտեր էր:

Վարդ եմ քաղէ ջամով է՝
 Սիրած եարը համով է.
 Ախպեր խաթրըը շմնայ,
 Եարըս քեզնէն համով է:

Քաղցի արտմ գարի,
 Կանչցի «արի՛, արի՛»,
 Ձէն տուի ծէնս շառաւ՝
 Ինձ լացուց տարի տարի:

Քոչ գուքայ, քոչ կանցնի,
 Քոչ քոչի մէջ կանցնի,
 Սիրտս կրակն ընկեր կէտի՝
 Ոչ կէտի ոչ կանցնի:

Քարիս տակը քարոտ է,
 Բանցր ծիանց արօտ է՝
 Ուղիղ օխթը տարի է՝
 Բուրն ախպօրէն կարօտ է:

Օչխարըն էրեր եմ դօշը՝
 Պիծիկի լեզուն խօշ է,
 Ես մեռնիմ պըզտի եարին՝
 Ամանաթ եարը քոշ է:

¹⁾ Պատմեցէք:

II.

Արեգակ ցածանց գնայ,
Յած տուր ու ցածանց գնայ.
Հեռու տնդ եարժ ունիմ,
Բարեւ տուր անցի գնայ:

Էրեւան ըսող եմ արել,
Ջիկեարս դաղ եմ արել,
Տօտու ու դուշմանի միջին՝
Լացս ծիծաղ եմ արել:

Սարիցը քօջըմ անցաւ,
Քօջը մէջ տվաւ անցաւ.
Սիրտս մէ կրակ լցվաւ՝
Ոչ էրեցաւ, ոչ անցաւ:

Մեր շարդաղը բանցո է,
Սիրած եարը քաղցր է,
Քնէք հօրը հարցնենք,
Թէ չը տվեց փախցնենք:

Սարերուն սինձը ի՞նչ է,
Կաթն ու բրինձը ի՞նչ է,
Ես եմ սիրել, ես կանոնեմ,
Ձեր կռիւ տալն ի՞նչ է:

Լուսնիակը նորեր է,
Եարիս եզը կորեր է,
Վով օր գտեր է թող տայ,
Յիսուն մանէթ միտայ կայ:

Եսախալը ման եմ ածել,
Բոյիդ նման եմ ածել,
Դու գիտես եւր եմ ասել,
Եարել ու ման եմ ածել:

Ծանէս ինձի բերել է,
Բալու էրել, տիրել է,
Քեաշքայ ըսալու մտնէի,
Եար քու մտքեդ շելնէի:

Էրեւանու բերին նուր,
Բերին թափին ժամին դուր,
Ժամի դունէն դուա կուգայ,
Շանդանի պէս լուա կուտայ:

Լամբի շեշան կը ծնկայ,
Կլորայ, ծոցը ընկայ.
Սիպեղը զոխ է դառել,
Իմ եարը դոխ է դառել:

Եարս խոտված գնաց,
Սարերէն սոռաց գնաց,
Նէա դուշ էղաւ, նէա կարաւ,
Ափէս թուա ու գնաց:

Ծանէս ինձի տփել է,
Դուրը վրէս խփել է.
Ես նանեէս ջորեր եմ,
Դիար, դիար կորեր եմ:

Ջաղացիս դուրը տարթ է,
Կտուրը լիքը մարթ է,
Աստված սիրող բան չասէ,
Ուզածս տղամարդ է:

Եսօշա վանկի թվանքը,
Կըլմանի կարմիր վանքը.
Կարմիր վանքի դըշերը,
Սիրուն եարիս թըշերը:

Խնամի խօշ ես էկել,
Դարդակ ու բոշ ես էկել,
Երկու թուլում ես ընրեն,
Ըն էլ ճանրան ես կերել:

Աղշի, աղշի ինչ ըլլիս,
Կատուններին պոշ ըլլիս,
Աղամանի թասս ըլլիս,
Քաշքայ հօրս հարս ըլլիս:

Ջուրն էլաւ երես, երես,
Բազրկան Աստված սիրես՝
Եփ օր դառնաս Շէրակալ
Սոնայիս հետդ բերես:

Փոցիս ծիրանի կոթ է,
Սիրոս եարալու խոց է,
Սրտինս սիրող ընկնի՝
Իմանաս սավտէն ինչ է:

Մանի ըսեմ ու շարեմ,
Տոպրակը լցնեմ ու կարեմ,
Առնեմ ընկնիմ գեղոց գեղ,
Քեզնէն լաւը կը ճարեմ:

Երկնից կամար ծնքերո,
Ինձնէն մի կտրէ սէրո,
Համ տոտին եմ համ լաշին,
Ես կարօտ եմ քո պաշին:

Ստանալօլ բոլոր մերի,
Բոլորը կըլլի դերի,
Ես իմ եարը կը ճանչեմ
Օսկի մագերը կ'երերի:

Ղարանֆիլը դեղին է,
Իմ ուզածը գեղէն է,
Կուզէք հարցրէք իմացէք,
Մեր դրկցանց տղէն է:

Լուսինն էլաւ կամարից,
Բռնէք եարիս քամակից,
Լեզուվս արինն առնեմ,
Ըն թուխախի դամարից:

Կապույտ քիրաճած տներ,
Մէջը կայ օսկի սներ.
Սարէն թափան աղջկներ,
Կլմանին կատողած շներ:

Տան յետեւ տուն եմ շինէ,
Հաւերուն ըուն եմ շինէ,
Միք վախենայ իմ դէօստեր,
Դուշմանը շուն եմ շինէ:

Այ նանի քու մերութեն,
Ինձ տվիր դարիբութեն,
Ղարիբութենը փուշ է,
Գեղի մէջը անուշ է:

Եշի ծառին նուշ կըլլի,
Վարդի ծառին փուշ կըլլի,
Երանի էն աղջկան,
Սիրած եարին ղիւշ կըլլի:

Քնեցայ էրած տեսայ,
Սեւ հերկը վարած տեսայ,
Տղայ թասիպտ մեռնի,
Քու եարը տարած տեսայ:

Էս գիշեր լուամ տեսայ,
Իմ եարը դուսը տեսայ,
Ըսի թէ հետը խօսիմ,
Աղբէրը քովը տեսայ:

Հերանցս դուսը դուզ է,
Հերըս պաշլըղ շատ կուզէ,
Հարուր մանէթին աշէ,
Պալտօնը թեւը քաշէ:

Սարիցը մատնիմ իջաւ,
Մատիս վրայ խաշվեցաւ,
Ես իմ եարը քեամ գիտէի,
Հաֆայիը քար ըացվեցաւ:

Դարդի եմ լալ շեմ կրնայ,
Դիմաց դէմ գալ շեմ կրնայ,
Դու էկար ինձէն անցար,
Ես էլի գալ շեմ կրնայ:

Այ տղայ էդ ես մէտ ես,
Խանչալը մէջքդ նետես,
Դու գիտես տղամարդ ես,
Ժմակի փթուկ փետ ես:

Միթկալ շապիկ կարեր եմ,
Դոշին կոճակ շարեր եմ,
Հինը մտքէս հաներ եմ,
Քեզի թաժայ ծարեր եմ:

Ձին դուսը կապած տեսայ,
Կրակը վառած տեսայ,
Եարս դոնիցը անցաւ,
Ձաքմանը պատուած տեսայ:

Կաղզման ճորին մէջը,
Պաղ աղբուր հորին մէջը,
Աղջի քու շամամ ծծեր
Անուշ խնձորի մէջը:

Թաւան ծակ է, եղ չը կայ,
Փեսան էկաւ տեղ չը կայ,
Փեսին շատ երես միք տայ,
Փեսին էյթիպար չը կայ:

Սարը ճերմակ վարդ կըլլի,
Տալտայ տեղը մարդ կըլլի,
Ես իմ ուզածը շառնեմ
Սրտիս մէջը դարդ կըլլի:

Քուրդը քոչեց՝ տուն չունի,
Սիրտս ըլաւ սուն չունի,
Սիրտ ըսածը շեշայ է,
Որ կոտուաւ, էլ խէր չունի:

Էրեւնու ալերը,
Կոունկն իջաւ կալերը,
Կանչէ կոունկ գարուն է,
Սիրտս զունդ զունդ արուն է,

Ժառին տակը էլ ունիմ,
Ալ արբեշում թնլ ունիմ,
Չոպան, տաւարդ քաշէ,
Ես քու վրադ սէր ունիմ:

Եար կայնեւ ես կարմնճին,
Մէնկիլ օղերն յանկըճիլ,
Քեզ կըսեն գեղի փեսայ,
Ժոցինդ է դեղին քիսայ:

Պատին մէջը պատ շիւղի,
Գեղին մէջը սար շիւղի,
Առջի խնկը քնզ ժողվէ՛
Բու ըսածդ լաւ շիւղի:

Սարին տակը մեծ գեղ է,
Ջրեր խառնած մէկ տեղ է,
Իմ եարս ինձ չի ծանշնայ
Ետեքը միտքը ո՛ւրտեղ է:

Լաւ աղչիկ ես քուր շունիս,
Հաքիդ կուտուռկայ շունիս,
Գնա կորի սեւերես,
Յերեսիդ ապուռ շունիս:

Ժառ եմ տնկէ շաֆթալու
Եարս կուգայ ման գալու,
Շէկիկ մագաւոր աղչիկ,
Դու ինձ էրիբ սաւտալու:

Սարերը ուշ է, մուշ է,
Իմ եարը ըանգլի դուշ է,
Ջոկեցի լաւը առայ,
Մեղորից, շաքրից անուշ է:

Գնացի սարը սնձի,
Ոտս առաւ մէկ սնձի,
Տեփան, միրուքդ խանձի,
Ձը տվիր Սօֆօն ինձի:

Էրեւան դիւքէան դիւքէան
Ծերմակ շիշայ ստաքան,
Ես իմ եարը սիրեցի,
Դիւշմաներս տրաքան:

Եարս եաղլըս վլաց,
Ախ էրի խնկըս գնաց,
Ետեքը միտքս քնզի Գետ,
Փողս շեքիցս գնաց:

Ծամփայ էրթաս էշտ ըլլիմ,
Արծըթէ իեարտ ըլլիմ,
Ուրտեղ որ եար դու իջնես,
Ղոնաղճիտ ալ ես ըլլիմ:

Ժառին տակը տալդայ է,
Քանի կայնիմ ֆայտայ է,
Միք մէխտըրէ դըրկցնեթ,
Էս ինչ շաթին սավտայ է:

Այ տղայ վերա պաշի,
Չաքմանիդ կուռը մաշի,
Քամ կշտովդ անց կենամ,
Թուխ գառը՛ փէշքաշ քաշի:

Առջի տունը լվացիր,
Եարդ մեռաւ չը լացիր,
Թաժայ եարդ տուն էկաւ,
Ծէրմակ գեօքսդ դու քացիր:

Չայիրնին կըլլի դամուշ,
Մէջն էր լիքը եմիշ,
Միք մէխթրէ մարիկներ,
Սրտով սիրածն էր անուշ:

Այ տղայ փետ կը տաշես,
Մայլայ մայլայ դու կաշես,
Ինձէն դայրի եար ըռնես,
Հաքիդ շուխան շմաշես:

Թեղ կենես թեղիդ մեռնիմ,
Ծոր գալած պեխիդ մեռնիմ,
Իրեք օր է շեմ տեսէ,
Ման գալած տեղիդ մեռնիմ:

Մեր քակը քակ կըլմանի,
Գլխունը թագ կըլմանի,
Էն տղան էկաւ անցաւ,
Իրմոքը բէկ կըլմանի:

Սարէն կեպէր էրկու մուխ,
Մէկը հսկաւ, մէկը ծուխ,
Էրկու զիզալ եմ սիրէ,
Մէկը շէկիկ մէկը թուխ:

Զաղացս ալուր կանէ,
Դիշմանս մըլուլ կանէ,
Թող իմ սիրածս ինձի տան,
Թող հետը քալուլ բերէ:

Կայներ ես կաթ կըլմանիս,
Բացվեր ես վարդ կըլմանիս,
Հայլին առ երեսդ աշէ,
Աշխըրքին զարդ կըլմանիս:

Կայնել ես պատին տակը,
Ցօլակը մատնուդ ակը,
Իմ կարած արախշինս,
Դրել ես Փասիդ տակը:

Արտէն էկար զեղ մտար,
Իմ ցկած տեղս մտար,
Ինձէն դայրի եար ըռնես,
Բէմուրադ հողը մտնես:

Իմ եարը միտս եմ ցըկէ,
Լաշակս ճիտս եմ ցըկէ,
Իրեք օր է շեմ տեսէ,
Կրակը սիրտս եմ ցըկէ:

Սարէն ես գամ, ճորէն՝ դու,
Հարսն ես սիրեմ, կեսուրը՝ դու,
Տունն ես քնիմ, կտուրը՝ դու,
Սէրն ես ուտեմ, մածունը՝ դու:

Մեր տանը ես վար կանեմ,
Զար ագոաւին քար կանեմ,
Թէ իմ սիրածն ինձի տան,
Գժութենս թարգ կանեմ:

Ժաղկէ վանքի ղըշերը,
Մեր քարափի շըշերը,
Ծրը կենայ գայ զիշերը,
Պազնեմ խանլուկ թշերը:

Կողքայ սարը ղոշայ է,
Միջի մարդը ղոշայ է,
Մաշիկ տվէք դուս յեյնեմ,
Ինձ էլ շասնն ղոշայ է:

Պուճուր աղշի մի թունի,
Բարով քու մարդը մեռնի,
Չեմ ղըմըշի քան ըսեմ,
Բամին ճեռներդ քաշի:

Գեղին ղոլոր շիման ա,
Չորս ղոլորը տուման ա,
Աղշի արի փախցնեմ,
Հերդ ու մէրդ շիմանայ:

Չատորի տակը հով է,
Առշիկ դու ինձի գովէ,
Ծգնատորին հատ:գը՝
Հաքել ես դանաւուգը:

Ջուխտ սարին հովին մեռնիմ,
Եէկ գեաղի պոյին մեռնիմ,
Վեց օր օխտն օր չեմ տեսէ՝
Տեսնողի աշին մեռնիմ:

Ոչխարն յիջել է դիւզը,
Չոկել եմ դարագեօզը,
Մանչ, տու մայրամատ վոլլամ,
Աննեմ՝ քեանքիլիդ թոզը:

Էս սարին սար չեմ ըսէ,
Եէկ գեաղին եար չեմ ըսէ,
Ալուր մաղեմ թեփ կուգայ,
Հըճըփ եարս ե՛փ կուգայ:

Յոտի ծակատ աւել եմ,
Ծս էն գեաղին համեւ եմ,
Գեաղի նոր ծլած քեխեր՝
Կլմանին օսկի թելեր:

Միթկալ շապիկ կարել եմ,
Դոշին կոճակ շարել եմ,
Հինը մտքես հանել եմ,
Զեզի թաժայ ճարել եմ:

Սարերը ծոն է առէ,
Արունը սիրտս է առէ,
Հեռու ճամփայ եար ոնիմ,
Աչքերս չորս է դառէ:

Սարէն կաղնի կը կարեն,
Մեր արընէն կը ծըծեն,
Հեռու շերթաս, հոգիջան,
Ինձի քեզնէն կը ջոկեն:

Այ տղայ կլորեր ես,
Սրտիս տիրապետեր ես,
Բլբուլի պէս խօսելու
Զիգեարս վառեց, էրեց:

Աղջի անոմտ Եուշան,
Ծերմակ բուխաղ թուխ նշան,
Ծս քու եարտ տեսեր եմ,
Ձեռքը ծոցին փոշիման:

Աղջի անոմտ Թագուն,
Ծստեր ես հօրտ սաքուն,
Ինչ չինարի քոյ ոնիս,
Երանի եարիտ հոգուն:

Կանաչ կանաչ կանչեցէք,
Կանաչ մէլդան բացեցէք,
Թագայ շորեր հագուցէք,
Ինձ իմ եարին հասուցէք:

Ջուխտ՝ գութան սար կը ըսանի,
Եէկ աղջիկ հաց կը տանի.
Մէկ կը քելէ, մէկ կայնի,
Տեսնողի խելք կը տանի:

Ալուր մաղեմ թեփ գուգայ,
Իմ եարըս հըճըփ եփ գուգայ,
Անմէն ծառին մէկ փշատ,
Ծարիս օմրը ըլլի շատ.

Արեգակ արայ տակին,
 Լուս կուտայ քարայ տակին.
 Ծար քեզի ո՛ւրտեղ տեսնի՞մ՝
 ծիղրանի ծառի տակին:

Զուրն առայ ելայ սարը,
 Չըտեսայ ֆիտան եարը,
 Փիտան եարըս ինձ տուէք,
 Միք քաշէ ահ ու զարը:

Թ. Ազնաուրեան.

